

բանի գէմ չէր խօսում ձմարիտ է մեզ ան-
արժան կերպով բամբասում էին: Ֆրանսիայի
վիճակը իր խելքի մէջ կարողացող մարդը
մեր մասին տեսն իր ծառաներին: «ազա-
տեցէք ինձ այդ մարդիկներին»: Այդ պատ-
գամաւորի խօսակցութեան ժամանակ ժողո-
վի մէջ աղմուկ կար, որ աւելի էլ սասա-
կացաւ, երբ ընկերի արտասանեց ծա-
ռայ բառը, որ Վամբաստայի կուսակիցնե-
րին էր վերաբերում: Այնուհետեւ ժողովը
ձայների ահագին մեծամասնութեամբ հաս-
տատեց Վամբաստայի պատգամաւորական
իրաւունքները Պատգամաւորների ժողովի
վերջին նիստերը վատ տպաւորութիւն են
գործել հանրապետութեան նախագահի վրա:
Քէյպտ Գրեյի համաձայն էր մինիստրու-
թեան կազմը յանձնել Վամբաստային,
բայց կամենում էր, որ պարլամենտական
սովորութիւնները զեղծված չը լինէին: Գրե-
յի նկատել է, որ այդ ամենը դեռ կարելի
էր համբերել, եթէ պարլամենտական ամ-
բիւնի մօտ չը լինէին կանգնեցած կարգա-
պահները, որոնք ընդդիմադրականներին լոյս
չէին տալիս ամբիւն բարձրանալ:

Ի նկատի առնելով Վամբաստայի մինիս-
տրութեան կազմվելը Ֆրանսիական դե-
պանները բերլինի, Վիեննայի և Պետեր-
բուրգի մէջ վճռել են համաձայնութեամբ
գործել: Կոմս Սեն-Վալէ, Բերլինի Ֆրանսիա-
կան դեսպանը յայտնել է Գրեյին, որ նա
կը շարունակէ վարել իր պաշտօնը միայն
այն դէպքում, եթէ Շարմել-Լակուր, Պոլ
Բեր և Ֆոկէ մինիստրի պաշտօն չեն ու-
նենայ: Նոյնը յայտնել է և Վիեննայի
ֆրանսիական դեսպանը:

ԱՆՍՏՐՈՒՆԳԱՐԱՒԱՆ

Վաղ ժամանակներում, երբ պետութիւն-
ների և ժողովրդների վիճակները անմի-
ջապէս փոփոխում էին պետական իշխանու-
թեան ներկայացուցիչների ձեռքով, վերջին-
ների անձնական տեսակցութիւնները պատ-
մական առաջնակարգ դեր էին խաղում:
Անձնական տեսակցութեան ժամանակ մի-
պետները կարողանում էին միմեանց յայտ-
նել այն, ինչ որ չէին վստահանում հաւա-
տալ միջնորդներին: Իրանց սեփական ի-
նքնատիւնով և անձնական ներգործութեան
ազդեցութեան շնորհիւ, նրանք, աւելի կամ
պակաս հիմքերի վրա, կապում էին յարա-
բերութիւններ, առաջնորդվելով անձնական
և զինատիրական շահերով: Շատ բնական
է, որ ժողովրդները այն ժամանակներում
միապետների անձնական յարաբերութիւննե-
րին մեծ նշանակութիւն էին տալիս, և
նոյնպիսի երկիւղով և յոյսով էին սպասում
նրանց տեսակցութեան հետեւանքներին, ինչ-
պիսի յոյսով, աստուածաշնչի աւանդու-
թեամբ, փղշտացիք և հրէաները սպասում
էին Գաւթի և Գողթի մէջ եղած մեծա-
մարտի հետեւանքին:

Ժամանակները փոխվեցան. ժողովրդների
վիճակների փոփոխումը մէջ սկսեցին մաս-
նակցել իրանք ժողովրդները, ինչ ներ-
կայացուցչութեան ձեւով և թէ քաղաքա-
կան կուսակցութիւնների, քաղաքական մա-
մուլի ձեւով: Չը նայելով այն բանի վրա, որ
ժողովրդները զարգանալով պետութիւնների
մէջ եղած յարաբերութիւնների բնառ-
ութիւնը սաստիկ փոխվեցան, բայց ար-
տաքին յարաբերութիւնների ժամանակ պե-
տութիւնների մէջ առաջին ձեւերից շատերը
պահպանվեցան և թէպէտ ներկայ ժամանա-
կում այդ ձեւերը բոլորովին այլ նշանակու-
թիւն ստացան, բայց հասարակութեան մե-
ծամասնութիւնը, ի ընդ շրջանում և ի

կական քաղաքագետներին, նայում է նրանց
վրա հին տեսակետով: Գրանց ապացոյց
կարող են համարվել այն առասպելական
պատմիկները և անհատական լուրերը, ու-
րոնք վերջին ամիսներում տարածվեցան եւ-
րոպական մամուլի և հասարակութեան մէջ
միապետների կայացած և կայանալի տե-
սակցութիւնների առիթով:

Արդէն մի շարքովից աւելի է, որ բոլոր
եւրոպական մամուլը, մասնաւոր աւստրիա-
կանը աշխատում է հասկանալ Հուլիսի
թագաւորի Ֆրանց-Յոսէֆի կայսրի հետ
տեսակցութեան նշանակութիւնը: Արդիւր-
ները միմեանց հակառակ կարծիքներ են
յայտնում այդ տեսակցութեան առիթով,
բայց բոլորը համաձայնում են, որ այդ
անցքը մեծ նշանակութիւն ունի Վիեն-
նայի ընդդիմադրական մամուլը այդ տե-
սակցութիւնը համարում է որպէս գրաւա-
կան աւստրո-գերմանական դաշնակցութեան
ամրութեան և հաստատութեան, գերմա-
նական ազատամիտ մամուլը Վիեննայի տե-
սակցութիւնը համարում է այն բանի նը-
շան, որ Բալկանեան գործերի վերաբերու-
թեամբ Եւրոպայի կառավարութիւնների
մէջ կատարուող համաձայնութիւն է կայացել,
և այլ այլն: Բոլոր այդ երկնայինութիւնների
մէջ Ֆրանց-Յոսէֆը և Հուլիսի թագաւորը ներկա-
յանում են ոչ որպէս ժամանակակից սահ-
մանադրական միապետեր, այլ հնադարեան
պէտեր, որոնք ազատ կերպով կարգադրու-
թիւններ են տնօրէն և կառավարում են ի-
րանց պետութիւնները, կը կամենան,—մի-
մեանց պատերազմ կը յայտնեն: Կը կամե-
նան,—գաշն կը կապեն մի օր և է հա-
րեան պետութեան գէմ: Կը կամենայ մէկը,
—կընծայի միւսին երկուեւրեք իր նա-
հանգիստից, և այլն:

Քաղաքագետ հարկաւոր չէ լինել հաս-
կանալու համար, որ ներկայումս պետական
հարցերը միապետների տեսակցութեան մի-
ջոցով չեն փոփոխում: Աւստրիայի և իտա-
լիայի մէջ եղած յարաբերութիւնները ու-
րոշվեցան վերջին քսան և հինգ տարում
կատարված անցքերով,—անցքերով, որոնք
մի կողմից խաղական թագաւորութիւնը
ստեղծեցին, իսկ միւս կողմից—ստիպեցին
Աւստրիային հիւսիսային իտալիան ձեռք
բերելու յոյսից բոլորովին հրաժարվել և
բոլորովին ուրիշ ուղղութիւն տուեցին ի-
տալիայի արտաքին քաղաքականութեանը:
Վիեննայի տեսակցութիւնը Ֆրանսիայի գէմ
ուղղված ցոյցի նշանակութիւն միայն կա-
րող է ունենալ, որի օգնութեամբ իտալիան
համակրութիւն է ցոյց տալիս Աւստրիա-
յին, իր նախկին թշնամուն, և ոչ թէ
Ֆրանսիային, իր նախկին ազատողին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլս, 20 հոկտեմբերի

Մարգար սխալական է կրնան: Այսօր Թիֆլիսի
«Մեզու» լրագրին 198-ր թիւը կարգացի, ուր
պ. Շամազարամ անուն մէկ անձ պ. Կիւլորթի
անցքէն օգուտ քաղելով, կը բարենաճի միւս
անգամ յարձակել «Մշակի» և նորա աշխատա-
կից պ. Գ. Նիկողոսեանի վրայ:

Մեր Կ. Պոլսի մէջ խնամակ պարոններ քիչ
ունենք, մէկն ալ մեզ Թիֆլիզէն ընծայուեցաւ,
որու պրօքը երկու ամիսը անգամ մը «Մասիս»
պատուական: Լրագրի մէջ կարգաւոր բարեբաղ-
դութիւնը ունիւք. ընկերակցութեամբ Բէշեանի
և Գրաւոր Աստի Զը գիտեմ թէ այդ պարոնը
իր կարտ դը վիզիտներուն վրայ ալ գրած է
«Թիֆլիզից Մասիս լրագրի» նախանձնելով տիւս-
դուր, բայց կրնամք վստահութեամբ ըսել թէ
մեծ կոչում չի ցոյց տար այդ պարոնին և պա-
րապ ձանձրութիւն է օր կառնել երկու ամիսը
անգամ մը, քանի որ իւր թղթակցութիւն անու-
նով քանի մը հարիւր մղոն հեռին յուղարկած ու-

րիչ բան չէ բայց եթէ, «Մշակի» և «Մեզու» քա-
ղաւոր և այն ալ հինգստ լուրերուն ժողովածոյն
Այդ չէ թղթակցի մը պաշտօնը և այդ վրացական
կոտորածներն անունը կրող պարոնը, որ մի
համալսարանական գրադէտ է կրնան, փոխանակ
անլի և դատարկ լուրեր տալու մեղի, լաւ կընէր
քիչ մը նկարագրել և ճանչցունել Բուստանայի
տաճկահայոց:

Կ. Պոլսի մէջ քանի թղթակցներն ալ ճիշդ
նորա պէս հակացած են թղթակցի պարտաւո-
րութիւնը: Բայց պոստեցոց ներքի է գտնել եթէ
չը գիտեն մաշուած լուրերէ զատ ուրիշ բան
գրել, վասն զի չեն ունեցեր ուսումն անուր
զիւրին առիթներ: Մենք աւելի խստապահանք
ենք: Ուսմանը եկած թղթակցութեանց մասին,
մանաւանդ երբ գրողը մի համալսարանական
ժանտի անձ է: Պ. Շամազարամ պարտաւորու-
թիւն ունի օրինաւոր և լուրջ տեղեկութիւններ
տալ մեզի Բուստանայոց վրայ: Երբ այս ճանա-
պարհը որոշէ ասել վերջը, պէտք է որ նախ
համալսարանականաց վրայ մեր այժմեան ստա-
ցած զազափարն ուղղէ, վասն զի քանի որ
բաղդն ունենք իւր գրածները կարգաւոր, մեր
այդ զազափարն խիստ նպաստաւոր եղած չէ
այդ զառակարգի անձանց մասին:

«Մեզու» վերոյիշեալ համարին մէջ, նախ
Գ. Արծրաթի վրայ կը յարձակի պ. Շամազա-
րամ, պատճառ բանելով որ նա բացառութիւն
չէ առած իւր մի հարցին պ. Կիւլորթի: Ազգա-
յին ժողովին զիմնուծ նկատմամբ, ի՞նչ կարե-
ւորութիւն է այս որ կուտայ այդ պարոնը այս-
պիսի ամենաշնչին մի խնդրոյ, և ինչ հարցա-
պնդումներ է որ կուղղէ առ «Մշակ»: Մենք
զրեւք որ պ. Կիւլորթի չէ ըրած այսպիսի մի
առաջարկութիւն: Ազգային ժողովին: Միթէ այս
բացասական հաստատութիւնը բաւական կը
կարծէ այդ ժողովը արդարացնելու համար, քան-
զու համար նորա ամեն մեղքերը: Ազգային ժո-
ղովը այնքան մեղադարար է ազգին առջև, այն-
քան ծանր և բազմաթիւ են իւր թերութիւն-
ները, որ մէկ ֆրանսացի պարոնի նամակը նը-
կատողութեան չառնելով, չէ կարող իւր յան-
ցանաց կշիռքն ամենաթիւն կերպով անգամ
յաւելցնել: Այսպիսի ժամանակ այս կերպ աղա-
յական միջադէպերով պարապուելը, բժախնդու-
թիւններ ընելը, միմիայն մեզ ցոյց կուտայ որ
պ. Շամազարամ Ազգային ժողովը այն մասին
անմեղ հաշկել կուղէ և նորա արժանապա-
տութեան ինքնակոչ պաշտպանը հանդիսանա-
լով, կը տընի պարտքիւ նորա միւս ամենամեծ
զեղծութիւնները:

Փոխանակ այսպիսի խնամակարանութիւննե-
րով զբաղելու, արդեաւ աւելի արդիւնաւոր չէր
ըլլար եթէ պ. Շամազարամ իւր ուշադրութիւնը
գործէր «Journal d'Orient»-ի № 43-ի վրայ,
որու մէջ խմբագիրը տախտակ է սա խօսքերով
զիմնել Կ. Պոլսի ազգայիններուն: Իսկ զաւրով
այն պատուարման հայոց որք է ամիսէ ի վեր
օրագիրը ձիւ կընդունէին և որք յարմար չը
դատեցին բաժանորդ գրուել, առ այժմ զաղա-
րեցուցինք նոցա միւր օրագիրն յուղարկելու ի-
րաւունք չէ որ մեք ուղեւնանք Ար-
քայէն աւելի արքայաւոր ըլլալու: Թող
այս ցաւալի յայտարարութեան կարեւորութեանը
վրայ մտածել պ. Շամազարամ համալսարանա-
կանը և հետեւելով պ. Գր. Արծրաթի և պ. Գր.
Նիկողոսեանի ջերմ հայրենասիրութեան օրինա-
կին, աշխատէր ինքն ալ յորդորել, յանդիմանել,
ամաչեցնել միւր անտարբեր և կարող ազգային
ները, որ օժանդակեն այդ ամենապատկաւ
լրագրին զարգացմանը, որպէս զի նա ալ օր մը
չլսատուած չընեն այսպիսի մի յայտարարու-
թիւն և շարտաւորել հայու անունը հասարակաց
կարծեաց առջև: Բայց չէ. «Մասիս» թղթակցն
ի Բուստանուն նախ կուղէ անպատճառ որ ժո-
ղովուրդը հասկընայ թէ պ. Կիւլորթի Կ. Պոլսի
նամակ գրել է թէ չէ:

Պ. Շամազարամ, թղթակցից «Մասիս» և այլն
և այլն կը քննադատէ նաև պ. Նիկողոսեանի
ընծած զիւրի իբրև սխալ, մինչդեռ կըսէ «Մշա-
կի» բուն յատկութիւններն են կողմնապահու-
թիւն, նախանձ և խտրականութիւն: Զը գիտեմ որ
ստիպանք հարցադարար պէտք է ըլլայ պ. Նիկո-
ղոսեան որ «Մասիս» թղթակցից և այլն, խնա-
յիւր է զայն փորը ինչ, անտես անենլով այն
համարաշխութիւնը որ խմբագիրը ունեն միւս
իւրեանց աշխատակիցներու հետ:

Մեք որ քայլ առ քայլ հետեւեցանք պ. Նիկո-
ղոսեանին այստեղ վարած պայքարին և տեսնեք

ընդհանրապէս «Մշակի» ընթացքը ազգային
գործոց և գործիչներու նկատմամբ, կը զարմա-
նանք թէ ինչ նպատակաւ այս կերպ կը մեկնեն
նոցա վարմունքը և ուրիշ բանի: չենք կրնար
վերագրել այդ ընդդիմադրական առած դիրքն
այլ նորա որ նա լոկ անձնական խուլ և խորին
զիջականութիւն մը ունի նոցա դէմ: Կը կա-
կածինք միանգամայն որ պ. Շամազարամ յակա-
մայս մի թիւնեցուցիչ միջոցով մէջ կապրի
այս ժամուս:

Պ. Նիկողոսեան նախ յարձակեցաւ այստեղի
գործող մարմիններու և գործիչներու վերացա-
կան և թուական ուղղութեան դէմ, փաստերն ի
ձեռն և ապացոյցները մասնաւոր ընելով: Մի-
թէ չեն տեսներ թէ այդ օղային պոստալիստ-
ները մէկ քիչ զապած են ինքզինքնին այժմ,
միթէ չեն իմացեր թէ նոյն իսկ Միացեալ ընկե-
րութիւնը հիմա բարեփոխիւր են իւրեանց
առաջուան խառնաշփոթ, անորոշ ուղղու-
թիւնը:

Պ. Նիկողոսեան յարձակեցաւ և կը շարունա-
կէ յարձակել Կ. Պոլսի ազգային ժողովոյ ապի-
կար և տարտամ գործունէութեան վրայ: Փաս-
տեր պակասեցան իրեն զայդ հաստատելու հա-
մար և միթէ նորանոր գէպեր չի գտն հաստա-
տելու նորա կարծեաց ճշմարտութիւնը ազգային
վարչութեան մասին: Նոյն դիրքն են բռնել
«Մշակ» և իւր աշխատակիցը՝ նաև Կ. Պոլսի
մամուլին նկատմամբ, որ ազգային ուղի է և ան-
կաշառակերութիւնէ զատ ամեն կատարելու-
թիւն ունի: Կարողանաւ նկատմամբ, որք ամօթ
և նախատինք են մի մայրաքաղաքի համար:
Կանանց և արանց զատարակութեան եղա-
նակին նկատմամբ, որ խնամակներ և թեթեա-
միաներ կարողաղէ միայն: Հայ էֆէնդիներու
նկատմամբ, որոց ամեն մէկը աստիճան մը ստա-
նալու համար կը ծախեն ազգ ու կրօնք, հայր և
մայր: Ո՞վ եւաւ, բոլոր այս փաստերով ցոյց
տուած եղելութիւնները նոյնպէս փաստերով
հերքել, և ինչու դուք ինքզ լուծ էլք մընչ
հիմա, ո՞վ թղթակցից «Մասիս» լրագրոյ Բուստա-
նանց: Սոցա ամենուն խելութիւնը, որք ազգին
տունը կը քանդեն հաւաքարար, հասարակու-
թեան յառաջ վազորօք յայտ առնելը՝ կողմնա-
պահութիւն է, նախանձ է, ինտրիգն է:

Եթէ պ. Շամազարամ անպատճառ մի ծառա-
յութիւն կուղէ մատուցանել ազգին, թող «Մա-
սիս» խմբագրութեան դասեր տայ Կովկասի
աշխարհագրութեան վրայ, որպէս զի նա ալ
Շամախին կրնանք մտա չընել և Պարսէն ալ Վա-
րաքղի: Երբեք հեռի բաւականապէս իւր ազ-
գային պարտաւորութիւնը կատարած համարելով
կրնայ քաշուլ թղթակցական տապալակէն, իւր
հետ ամենլով բոլոր «Մասիս» ընթերցողաց ի
խորոց արտի արձակած յորանջումները:

Հ. Յ.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի. «Новое
Время» լրագրի հարցում է. վարչական
աքսորվածների գրութիւնը քննող մասնագե-
ղովը կարելի համարեց շատերին ազատել
և հոգալ աքսորվածների գրութեան բարոյա-
ման մասին Պետական կոմարոյը ընդունեց
Գորվիցի ընկերութեան 11,300,000 ռ. ձե-
տալական պարտքին: Մինիստրների մասնագե-
ղովը կը չենէ այդ գործը նոյեմբերի 30-ին:
«Новост» լրագրի հարցում է լուր, թէ
ոչնչանում են 3 կարգի արտօնութիւնները,
առաջին կարգի ծառայութեան ժամանա-
կամիջոցը ընդարձակվում 1 1/2 տարով, երկ-
րորդը 3 տարով: Այդ կարգադրութիւնը
ժողովրդական լուստաւորութեան մինիստրի
քննութեանը կը յանձնվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի: Պետական
բանկի 5% օտոմակի առաջին շրջանի
արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 92 ռ. 12 կ.,
երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ. 50 կ.,
ներքին 5% օտոմակի փոխառութեան օտո-
մակը արժէ 220 ռ. 75 1/2 կ., երկրորդ
214 ռ. 75 1/2 կ., արեւելեան առաջին փո-
խառութեան օտոմակը 90 ռ. 25 կ., երկ-
րորդ 90 ռ. 25 կ., երրորդ 90 ռ. 25 կ.,
ոսկի 7 ռ. 64 1/2 կ.: Իրաւաց 1 ռուբլ
1 օնգոնի վրա արժէ 25,81 պէնտ, Բուստաց
100 ռ. Փարիզի վրա 272 ֆր. 75 1/2
սանիթմ: Բորսայի տրամադրութիւնը հան-
գարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ